ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

« 05 » 06 2018 թ. N ՄԲ/ՀՆԳ-1-315450-18

Ձեր 21.05.2018թ.
թիվ Դ/21214-18

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԿ

«ՀԵՏՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԼՐԱԳՐՈՂ

ՏԻԿԻՆ ՍԵԴԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ղուկասյան

Գրությամբ ներկայացված հարցումների վերաբերյալ տեղեկացնում եմ, որ համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի իրավակարգավորումների՝ անձը կարող էր մինչև 2018 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար հրաժարվելու սոցիալական վճար կատարելու պարտականությունից (պարտադիր կուտակային բաղադրիչին մասնակցելուց), եթե սահմանված ժամկետում ներկայացրել է համապատասխան դիմում:

Ըստ այդմ, որ 2018 թվականի հուլիսի 1-ից սոցիալական վճար կատարելը կամ պարտադիր կուտակային բաղադրիչին մասնակցելը պարտադիր է 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված բոլոր վարձու աշխատողների համար՝ անկախ գործատուի կազմակերպաիրավական կարգավիճակից:

Միաժամանակ հայտնում եմ, որ վերջին շրջանում Հայաստանի Հանրապետությունում արձանագրված քաղաքական իրողությունների համատեքստում անհրաժեշտություն է առաջացել անդրադարձ կատարել նախորդ բոլոր խնդրահարույց նախաձեռնություններին, այդ թվում՝ լուծումներ առաջադրել պարտադիր կուտակային բաղադրիչի կապակցությամբ առկա խնդիրներին:

Ընդ որում, լուծումները պետք է տրվեն խորքային ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում՝ քննարկելով բոլոր հնարավոր տարբերակները և այդ տարբերակների հետևանքները, դրանց ազդեցությունը մեր երկրի սոցիալ տնտեսական կյանքի վրա:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ. ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծ, որով առաջարկվում է ևս 1 տարով հետաձգել պարտադիր կուտակային բաղադրիչի գործարկումը՝ նպատակ ունենալով հիմնարար լուծումներ առաջադրել խնդրո առարկա հարցերին:

Միաժամանակ, հայտնում եմ, որ կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչ ընկերությունների գործունեության և կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի սահմանադրականության վերաբերյալ գնահատական տալը դուրս է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության լիազորություններից:

Իմ կենսաթոշակային հաշվին առկա միջոցների վերաբերյալ հարցի կապակցությամբ տեղեկացնում եմ, որ չեմ հետևել՝ ժամանակի սղության պատճառով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Մ. ԹԱՆԴԻԼՅԱՆ**

Կատ.՝ կենսաթոշակային ապահովության վարչություն
010 52 04 48